
ԻՆՉՈՒՒ ԿԱՍ ԻՆՉԻՑ Է ՎԻՐԱՎՈՐՎԱԾ ՆԱՐԵԿԱՑԻՆ

ՀՐԱՉԻԿ ՄԻՐՉՈՅԱՆ

Թեև նարեկացիագիտության մեջ վաղուց արմատավորված է այն տեսակետը, որ բանաստեղծն ընդհանրապես «խուսափել է իր մասին մանրամասն տեղեկություններ տալուց»¹, բայց նրա գլուխգործոց «Մատեան ողբերգութեան» ստեղծագործության ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ նրանում առկա են ինքնակենսագրական հարուստ տեղեկություններ, սակայն դրանք մատուցված են այնքան նրբին ձևով, որ սովորական մոտեցմամբ խիստ դժվար է դրանք ընկալել ու հասկանալ: Եվ բնավ պատահական չէ, որ նարեկացիագետներից շատերը, խոսելով Մատյանը հասկանալու դժվարությունների մասին, նշում են ամենատարբեր պատճառներ: Օրինակ՝ վաստակաշատ նարեկացիագետ Ա. Ղազինյանի կարծիքով՝ Նարեկացուն հասկանալու բարդությունը նախ և առաջ պայմանավորված է բանաստեղծի «աշխարհայեցողությամբ, նրա բարոյա-փիլիսոփայական ըմբռնումների եւ կրօնա-աստուածաբանական գաղափարների համակարգով: Եւ ապա՝ դա կապված է իրականութեան արտացոլման նրա գեղագիտական սկզբունքների, իդեալի եւ այդ իդեալը կեանքում իրագործելի դարձնելու հետ»²: Ասվածին եւ կհավելի նաև, որ բանաստեղծը մի կողմից խուսափել է գեղարվեստական ստեղծագործության մեջ ինքնակենսագրական ուղղակի տեղեկություններ հայտնելուց, իսկ մյուս կողմից, որպես ճշմարիտ ստեղծագործող, արտահայտելով սեփական ապրումները, հույզերը, զգացումները, գաղափարներն ու իդեալները, բնականաբար չէր կարող իսպառ անտեսել անձնական կենսագրության կարևորագույն իրադարձությունները, ուստի դրանք արտահայտելու անկասելի մղումից դրդված՝ դիմել է ասելիքն արտաքնացնելու այնպիսի ձևերի ու հնարների, որոնք առաջին հայացքից իսկապես շատ դժվար է հասկանալ: Իսկ եթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ անցած հազարամյակի ընթացքում մեր լեզուն այնպիսի փոփոխությունների է ենթարկվել, որ լեզվական շատ ու շատ միավորներ ձեռք են բերել նույնիսկ տրամագծորեն հակադիր իմաստներ, իսկ գրաբար հայերենը վա-

¹ Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, գիրք առաջին, Ս. Էջմիածին, 1996, էջ 18:

² Ա. Ղազինյան, Գրիգոր Նարեկացի. բանաստեղծական արուեստը, Անթիլիաս, Լիբանան, 1995, էջ 121:

դուց դադարել է կենդանի հաղորդակցության միջոց լինելուց, իսկապես կհամոզվենք, որ, կան Մատյանը հասկանալու տարաբնույթ դժվարություններ: Օրինակ՝ բանաստեղծը սովորաբար իր մասին արտահայտվում է ակնարկներով, առակներով, այլաբանությամբ, գուգակշռությամբ, համեմատությամբ, նմանագրությամբ, ինքնակշտամբանքով, ինքնապարսավանքով, ինքնաբամբասանքով, խոստովանությամբ, մաղթանքներով, աղաչանքով, ծածկագրությամբ, լեզվական նորաբանությամբ և այլն: Ընդ որում՝ այդ ամենը ոչ թե ամփոփված ու մեկտեղված է որոշակի գլուխներում, թեև կան նաև այդպիսիք, այլ սփռված է ամբողջ Մատյանով մեկ: Այդ կարգի տեղեկություններն առանձին-առանձին, իբրև կանոն, կենսագրական որոշակիություն ըստ էության չեն արտահայտում, ուստի հասկանալու և որոշակիացնելու համար պետք է դրանք հավաքել, մեկտեղել ու առադրել, կապել ու կապակցել իրար:

Վերջապես, կա Մատյանի հասկացումը դժվարացնող մեկ այլ կարևոր գործոն ևս. հանրահայտ է, որ նրանում սկզբից մինչև վերջ բանաստեղծն այնքա՛ն հաճախակի ու ակնհայտ է քննարկում մարդու և անձամբ իր մեղքի ու մեղավորության հիմնախնդիրները, դասակարգում դրանց տեսակները և դրսևորման ձևերը, նշում հաղթահարման ուղիները, որ առերևույթ թվում է, թե դրանցից գատ Մատյանում այլ հարցեր չեն արծարծվում, ու այլ կարգի տեղեկություններ չեն հայտնվում: Արդյոք դա չէ՞ պատճառը, որ Մատյանի գնահատման հարցում երբեմն վրիպել են նաև տաղանդավոր գրողները (Շահան Շահնուր, Կոստան Զարյան և ուրիշներ):

Մինչդեռ Մատյանի մանրագնին ուսումնասիրությունից պարզվում է, որ թեև գրեթե բոլոր գլուխները (բացի ՂԲ և ՂԳ գլուխներից) ունեն «Ի խորոց սրտից խաւսք ընդ աստուծոյ» խորագիրը, բայց բազում գլուխներում հեղինակը գրուցում է նաև իր «պարտաւոր», «կորուսեալ», «մեղաւոր», «թշուառ», «եղկելի», «ողբալի» անձի հետ և հատկապես այդ գլուխներում էլ հայտնում է ինքնակենսագրական բնույթի տեղեկություններ, որոնց ճիշտ ըմբռնումը խիստ կարևոր է ամբողջ Մատյանը հնարավորինս ճիշտ հասկանալու և գնահատելու համար: Օրինակ՝ իր մեղավորությունից բացի, բանաստեղծը մեղմորեն հնչեցնում է նաև իր վիրավորվածության թեման, որը ըստ էության չի արժանացել պատշաճ ուշադրության: Ըստ այդմ՝ սույն հոդվածում ցանկանում եմ ընթերցողի դատին ներկայացնել Մատյանում **վեր** (վիր) արմատով կազմված բառերի այն գործածությունների³ մի մասը, որոնք վերաբերում են հենց բանաստեղծի անձին: Նախ ասեմ, որ Մատյանում առկա է նշված ար-

³ Որ Մատյանում նույնիսկ մեկ բառի գործածությունների առադրումն ու քննությունը կարող են նպաստել դրա խորքային հասկացմանը, տե՛ս **Զ. Միրզոյան**, Նարեկացու Մատյանում **բեկ** արմատով գործածված բառերի քննության փորձ, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», 2017, թիվ 1:

մատով կազմված ընդամենը յոթ բառ՝ **վեր, վիրաւոր, վիրաւորեալ, վիրաւորել, վիրաւորեմ, վիրաւորիլ և վիրաւորիմ**: Ընդ որում՝ այդ բոլորը գործածված է 41 անգամ, բայց ընդամենը 35 գլուխներում, այսինքն՝ կան գլուխներ (ԺԴ, ԺԷ, ԻԳ, ՂԲ, ՂԳ), որոնցում հանդիպում է 2-ական բառ: Հավելեմ նաև, որ **վեր** բառը գործածված է 23, **վիրաւորեալը**՝ 10, **վիրաւորիմը**՝ 3, **վիրաւորը**՝ 2, իսկ մնացյալ 3 բառերը՝ մեկական անգամ*։ Ինչպես ասվեց, նշված բառաձևերից ոչ բոլորն են վերաբերում բանաստեղծի անձին, իսկ իրեն վերաբերողներից ոչ բոլոր դեպքերում է, որ ստանում ենք որոշակի տեղեկություն: Խնդրո առարկա բառերից, իմ կարծիքով, կարևոր է հատկապես **վիրաւորեմ** բայը, որովհետև, բացի վերից, մյուս բառերը հանդես են գալիս որպես **վիրաւորեմ** բայի այլակերպություններ: Մեզ հետաքրքրող բայը Հայկազյան լեզվի նոր բառգրքում բացատրված է. «**Վիրաւորեմ**. եցի. ն. ... Վերս տալ. կր. առնուլ. խոցել. խոցոտել. հարկանել (իրօք կամ նմանութեամբ)»⁴: Ստ. Մալխասյանցի բառարանում կարդում ենք. «**Վիրաւորել**, եցի. նր. 1. Հարուածով վերք հասցնել, մարմինը խոցել, կտրել, կոտրել, ջարդել ևն... 2. **Փոխ**. Խոսքով կամ գործով անպատուութիւն հասցնել, բարոյական կամ հոգեական վերք հասցնել»⁵: Իսկ Էդ. Աղայանը գրում է. «**Վիրավորել**, նր. 1. Վերք հասցնել (խոցելով, հարվածելով, գնդակով ևն): 2. **Վիրավորել**, խոցել, խորը վիշտ պատճառել: 3. **Վիրավորել**, վնասվածք հասցնել, վնասել (կտրելով, կոտրելով ևն): 4. Վիրավորանք պատճառել, վիրավորական արարքով՝ խոսքով, վերաբերմունքով վշտացնել՝ հոգեկան ցավ պատճառել»⁶:

Ինչպես տեսնում ենք, բոլոր բառարանագիրները այն համարելով ներգործական սեռի բայ, բացատրում են որպես ուրիշին ուղղված գործողություն, արարք ցույց տվող, որի հետևանքով գործողության ազդեցությունը կրող օբյեկտ-անձն ստանում է մարմնական կամ հոգեկան վերք, ցավ, վիշտ ու վիրավորանք, ուստի իրեն զգում է վիրավոր կամ վիրավորված: Այստեղից հետևում է, որ վերք ունեցող, վիրավոր կամ վիրավորված անձն անպայման դրսից, ուրիշից կամ ուրիշներից ստացել է ֆիզիկական կամ հոգեկան ցավ պատճառող հարված, որի հետևանքով նրա մարմնի վրա կամ հոգում գոյացել է որոշակի վերք կամ վիրավորվածության զգացում: Ասել է թե՛ մարդս հենց այնպես, առանց արտաքին ազդեցության, ինքնաբուխ չի վիրավորվում ու չի ունենում

* Ի դեպ՝ այս հաշվարկները միանգամայն ստույգ են, որովհետև կատարել ենք Մատյանի 1975-1978 թթ. կազմված եռահատոր համաբարբառի հիման վրա (կազմողներ՝ Ժորա Թոսունյան, 1-2 և Էլիզա Դեմիրճյան, 3), որը անհամեմատ դյուրացնում է նման աշխատանքը:

⁴ **Հ. Գաբրիել Աւետիքեան, Հ. Խաչատուր Միւրմէլեան, Հ. Մկրտիչ Աւգերեան**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատոր երկրորդ, Եր., 1981, էջ 825:

⁵ **Ստեփան Մալխասեանց**, Հայերէն բացատրական բառարան, հատոր չորրորդ, Եր., 2010, էջ 346:

⁶ **Էդ. Աղայան**, Արդի հայերէնի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 1394:

վիրավորվածության զգացում: Ինքնին հասկանալի է, որ բանաստեղծի վերքերն ու վիրավորվածությունը եղել են նախ և առաջ հոգեկան ու հոգեբանական բնույթի, թեև չի բացառվում նաև ստացած հարվածների պատճառով հասարակական կյանքում ունեցած դիրքի ու կարգավիճակի փոփոխություն, որի պատճառած ցավի զգացումը դադարում է զուտ հոգևոր լինելուց: Այժմ տեսնենք, թե ի՞նչ է ասում բանաստեղծը իր ստացած վերքերի ու վիրավորվածության մասին:

Մատյանի երկրորդ գլխի հենց սկզբում, դիմելով իր պարտավոր անձին, բանաստեղծը հարցնում է.

Զի՞նչ արինակ առ այս քեզ նմանագոյն եւ յարմարական
Աստանաւր եղից, անձն իմ պարտաւոր:

Գլխի վերջում արդեն խոսքն ուղղելով Աստծուն՝ տարակուսանքով հարցնում է.

Ո՞չ մատուցանիցես դեղ **վիրացո**⁷,
Ո՞չ սպեղանիս **խոցուածոյս**,
Ո՞չ դարման տկարութեանս...

Փաստորեն Աստծուց խնդրելով դարմանել իր վերքերը, բանաստեղծը ոչ միայն հաստատում է դրանց գոյությունը, այլև հաջորդ տողում **խոցուածոյս** բառով շեշտում է դրանց *դրսեկ* լինելը:

Չորրորդ գլխում արդեն ոչ միայն հայտնում է իր վերքերի գոյության մասին, այլև դրանք համարում է անողջանալի՝ ավելի ընդգծելով դրսից՝ ուրիշներից դրանց ստացված լինելու հանգամանքը և խորության աստիճանը.

Նա զի եւ չիք իսկ բժշկութիւն
Բազմավտանգ սաստկութեան **վիրացո անողջանալի**՝
խայթմանց խածուածոց մահաբերին բերանոյ ժանեաց՝
Որսողին զանձն իմ ի կորուստ:

Թվում է՝ բանաստեղծի խոսքն այնքան հստակ է, որ առանձնահատուկ մեկնաբանության կարիք չի զգացվում, քանզի ասում է, որ իր վերքերն անողջանալի են, որովհետև գոյացել են մահաբերի ժանիքների խածվածքներից, որոնց հետևանքով կորստի է մատնվել բանաստեղծի անձը:

Վեցերորդ գլխի սկզբում, հետևելով «Գիրք պիտոյիցից» եկող ավանդույթին, բանաստեղծը քննարկում է Մատյանի գրության նպատակի հարցը, ուստի գրում է.

Իսկ արդ, զի՞նչ բարութ գոյ առ այս,
Եւ կամ ո՞ր աւգուտ ինձ առ սոյն՝
Զայս սահման ընթացից ձայնիս հեծութեան լքանել,
Եւ ոչ զամբարեալ շարաւ մահացու վիրիս

⁷ Մատյանից բոլոր մեջբերումները կատարում ենք քննական բնագրից՝ **Գրիգոր Նարեկացի**, Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ՝ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Եր., 1985: Այս և հետագա ընդգծումներն իմն են:

Խարանաւ բանիս արտաքս հերքել
Եւ կամ զծանրութիւն սրտիս մթերեալ ցաւոյս հոգեկան խիթոյս,
Իբր **տաղտկացուցանողական հնարաւորութեամբ,**
Մատնամուխ զգուանաւք փսխել:

Կարծում եմ՝ բանաստեղծի խոսքից միանշանակ հետևում է, որ նրան առաջին հերթին հետաքրքրել է ոչ թե և ոչ այնքան իրականում գործած կամ հնարավոր գործելիք մեղքերի խոստովանությունը, որքան մահացու վերքերից իր հոգում կուտակված մաղձն ու դառնությունը թափել-մաքրելու խնդիրը, որի համար էլ հենց իր գլուխգործոցը վերնագրել է «Մատեան ողբերգութեան» և ոչ թե «Աղօթագիրք» կամ «Մատեան աղօթից», ինչպես ուրիշներն են կոչել այն: Քանի որ դա հայ գրականության պատմության մեջ միանգամայն նոր երևույթ էր, այստեղից էլ բանաստեղծը դիմում է ոչ թե սովորական, բնական, հանրահայտ, այլ արտասովոր, անհայտ ու անբնական միջոցների՝ «տաղտկացուցանողական հնարաւորութեամբ, մատնամուխ զգուանաւք» փսխելու: Վստահ եմ, հազիվ թե համաշխարհային գրականության մեջ գտնվի որևէ աղոթագիրք կամ աղոթքների ժողովածու, որում գործածված լինեն այդօրինակ բառեր ու պատկերներ: Եվ եթե 6-րդ գլխում սահմանում է Մատյանի գրության նպատակը, ապա 65-րդ գլխում, ասես ամփոփելով այդ տեսակետից արդեն կատարած աշխատանքը, ասում է, որ «Զդառնութեանս մաղձ ժայթքեցի, ... Զամբարեալ թարախ վիրիս քամեցի, ... Զմրուրն մահու փսխեցի, Զպալարս հոգւոյս խածուածոց քահանայապետիդ Քրիստոսի բացի»: Ասվածից հետևում է, որ բանաստեղծն ինքնակենսագրական տեղեկություններ հայտնում է հիմնականում նախընթաց գլուխներում, թեև չեն բացառվում նաև հաջորդ գլուխներում: Ի դեպ՝ թեև բանաստեղծը ծայրաստիճան խուսափում է բառերի, առավել ևս դարձվածների կրկնությունից, բայց, ինչպես տեսնում ենք, 6-րդ գլխի շարաւ բառի փոխարեն գործածել է թարախ բառը, սակայն պահպանել է փսխել բայը, իսկ «զամբարեալ շարաւ մահացու վիրիս» կապակցությունը դարձրել է «զամբարեալ թարախ վիրիս»: Վերջապես, եթե առաջին դեպքում պարզապես նպատակ ունեւ խոսքի խարանով «արտաքս հերքել» իր մահացու վերքերում ամբարված շարավը, ապա երկրորդ դեպքում արդեն փաստում է՝ «Զամբարեալ թարախ վիրիս քամեցի»:

Ութերորդ գլխում ևս, սկսելով գրուցել իր կորուսյալ անձի հետ, երկրորդ ենթագլխում նրա վերքը համարում է անբուժելի՝ «զանբժշկականդ քո վեր», իսկ ստացած հարվածը՝ անօրինակ՝ «զանաւրիհնակդ քո հարուած»: Երկրորդ ենթագլխի (որով ավարտվում է այս գլուխը) վերջում արտահայտում է ինքնաբնութագրական հետաքրքիր մտքեր, որոնցից, իմ կարծիքով, ուշագրավ են հատկապես հետևյալ տողերը.

Ո՛վ անարժանդ ի փրկութեանց,

Ո՛վ տնանկդ ի բարձրութեանց,

Եւ ի հոգեւոր հարստութեանց
Եւ հատուածեալդ յաւրինելոց:

Վերը մենք նշեցինք, որ Մատյանը հասկանալու դժվարություններէն ընդ մեկն էլ այն է, որ գրաբարը վաղուց դադարել է կենդանի լեզու լինելուց, ուստի գրավոր խոսքի ոչ ճիշտ ընկալումն ու հասկացումը կարող են պատճառ դառնալ կոպիտ սխալների: Ասվածի լավագույն հաստատումը կարող ենք գտնել Մատյանի աշխարհաբար հայերեն (և ոչ միայն) թարգմանություններից շատերում: Քանի որ Մատյանի աշխարհաբար թարգմանիչները ուղղակի կամ անուղղակի, ցավոք, կրել են առաջին թարգմանության (թարգմանիչ՝ Միսաք Գոչունյան) ազդեցությունը, ըստ այդմ՝ հաճախ կրկնել են նրա թույլ տված սխալները: Այդ տեսակետից հատկանշական է ինդրո առարկա ամբողջ ենթագլխի, բայց առավել ևս՝ բերված քառատողի թարգմանությունը: Հաշվի առնելով սույն հարցադրման հույժ կարևորությունը՝ հարկ եմ համարում անդրադառնալ 8-րդ գլխի 2-րդ ենթագլխից վերը բերված քառատողի թարգմանություններին.

Միսակ Գոչունյան – «**Ո՛վ փրկուածներուն մէջ անարժան, ո՛վ բարձրերուն և հոգւով հարուստներուն քով տնանկ և օրհնուածներէն զատուած**» (էջ 41):

Թորգոմ Գուշակյան – «**Ո՛վ փրկութեան անարժան, ո՛վ բարձրութեան է և հոգեւոր հարստութեան է ինկած դու, եւ զատուած ու նզովուած՝ օրհնեալներէն**» (4-րդ հրատ., էջ 47):

Գարեգին Խաչատուրյան – «**Ո՛վ անարժանդ փրկուածներուն մէջ, ո՛վ տնանկդ բարձրացածներուն և հոգեւոր հարուստներուն մէջ եւ հատուածեալդ օրհնուածներուն մէջ**» (վերարտադրություն 1926 թ. տպագրությունից, Եր., «Լուսաբաց հրատարակչություն», 2014, էջ 45: Գրեթե նույնն է նաև տողատված թարգմանության մէջ, Պուէնոս Այրէս, 1948, էջ 18):

Մկրտիչ Խերանյան – «**Ո՛վ անարժանդ փրկվածների մէջ, // Ո՛վ տնանկդ բարձրերի և հոգեպես հարուստների մէջ, // Եվ բաժանվածդ դու օրհնվածներից**» (Եր., Մուղնի, 2003, էջ 47):

Վազգեն Գևորգյան – «**Եվ անարժանդ՝ փրկվածների մէջ, // Տնանկդ՝ հոգևոր հարստությունից ու բարձրությունից // Եվ օրհնյալներից զատվածդ անեծքով**» (Եր., 1979, էջ 51):

Ռուս. տողացի – «**О недостойный средь спасенных, // Бедный средь вышних и духом богатых, // Проклятый средь благословенных**» (М., 1988, с. 51):

Բերված օրինակներում մեզ հետաքրքրում է հատկապես «Ո՛վ անարժանդ ի փրկութեանց» մտքի թարգմանությունը: Ինչպես դժվար չէ տեսնել, չհաշված նրբերանգային առանձին մանրուքներ, թարգմանությունները բաժանվում են երկու խմբի, որոնցից առաջինում (Գոչունյանի, Խաչատուրյանի, Խերանյանի, Գևորգյանի և ռուսերեն տողա-

ցի) ունենք «ո՛վ փրկվածների մեջ անարժան», իսկ երկրորդում (Թ. Գուշակյան)՝ «Ով փրկության անարժան» իմաստը: Փաստորեն դրանցից առաջինում ասվում է «փրկվածների մեջ անարժան», իսկ երկրորդում՝ «փրկության անարժան»: Լինելով հակադիր դատողություններ, բնականաբար, ճիշտ է միայն դրանցից մեկը, իսկ այդ մեկը Թ. Գուշակյանի թարգմանությունն է: Սյուսները սխալ են, որովհետև ակնհայտորեն հակասում են Մատյանի բովանդակությանն ու բանաստեղծի հիմնական նպատակին: Չէ՞ որ Մատյանի սկզբից մինչև վերջ հեղինակն իրեն համարում է մեղավոր, պատժված ու ինչ-ինչ բաներից զրկված, ուստի Աստծուն խնդրում, աղաչում ու պաղատում է ներել իրեն իր գործած ու չգործած մեղքերի համար: Չմոռանանք, որ համաձայն քրիստոնեական բարոյափիլիսոփայական ըմբռնման և անձամբ Նարեկացու պատկերացման՝ փրկություն, այսինքն՝ մեղքերի թողություն վերջին հաշվով շնորհում է Քրիստոս-Աստվածը, որի ցանկացած վճիռ, որքան էլ արտառոց թվա մարդկային բանականությանը, Նարեկացին համարում է անառարկելի, անքննելի ու անբեկանելի: Օրինակ՝ 11-րդ գլխում հիշատակելով նախաքրիստոնեական և քրիստոնեական շրջանում բազմաթիվ ներվածների՝ Ենովք, Դավիթ, Պետրոս, Պողոս և այլք, գրում է.

Ապա ուրեմն ըստ այսու կանոնի ճշմարտագունի,

Եւ անփոխադրելի սահմանի,

Եւ արարչաւանդ պայմանի

Համբուրեմ հաւատոց շրթամբք զպատկեր բանիս

Եւ ակն ունիմ փառացն շնորհի,

Քանզի արդարեւ յարդարացուցանելն զմեզ աստուծոյ՝

Ոչ ոք զարե՛ դատապարտ առնել,

Ըստ առաքելական բանի սահմանի:

Վերջին տողում ասելով «Ըստ առաքելական բանի սահմանի»՝ բանաստեղծը նկատի ունի Պողոս առաքյալի՝ Հռոմեացիներին ուղղված թղթի հետևյալ մտքերը. «Ո՛վ է, որ մեղադրելու է Աստծու ընտրեալներին. Աստուած է, որ արդարացնում է: Իսկ արդ, ո՞վ է, որ դատապարտելու է: Քրիստոս Յիսուս է, որ մեռաւ, մանաւանդ որ յարութիւն էլ առաւ. եւ Աստծու աջում է եւ բարեխօս է մեզ համար» (Ը. 33-34): Ասեմ նաև, որ Մատյանում այս կարգի պնդումներ հաճախ են արվում: Օրինակ՝ ԼԳ գլխում հիշեցնելով անառակ որդու և պոռնիկ կնոջ հանդեպ Քրիստոսի դրսևորած գթությունն ու ներողամտությունը՝ գրում է.

Այո՛, այո՛, եւ ես մի եմ ի նոցանէ,

Եւ զի՛ս ընկալ ընդ նոսին՝

Իբր մարդասիրութեան կարատեալ մեծի,

քաջ գիտենալով, որ Քրիստոսի ներելուց և փրկելուց հետո ոչ ոք ոչինչ ասել կամ անել չի կարող:

Եթե մինչև այժմ, ինչպես տեսանք վերը, բանաստեղծը պարզապես հայտնում էր իր ունեցած վերքերի մասին, ապա 14-րդ գլխում փոքր-

ինչ ավելի է զարգացնում ասելիքը, Աստուծոց խնդրելով՝
Խոնարհեցո՛ գունկն քո, բարձրեալ բարեգութ,
Կենաց ապաւեն, նորոգ մերձեցեալ կրկին աստանաւր՝

Ի հառաչումն նուադս ձայնի վիրաւորելոյս:

Դիտելի է հատկապէս այն հանգամանքը, որ եթէ իր մեղավորութեան մասին բանաստեղծի խոսքը սովորաբար հնչում է բարձրաձայն ու ամենքին լսելի, ապա վիրավորվածության մասին պատմելու համար կարծես ուժ ու կարողություն չունի, ուստի Աստուծոց խնդրում է խոնարհեցնել ականջը, որպէսզի կարողանա նվաղած ձայնով մի կերպ շշնջալ իր ասելիքը: Այնուհետև, նորից մտաբերելով ավազակների ձեռքով սրախողխող արվածի պատմությունը, Քրիստոսից խնդրում է, որպէսզի իրեն ևս ապրեցնի՝ մաքրելով «ի մեղաց պարտեաց», և տա «քաւութիւն եւ բժշկութիւն», այսինքն՝ ների մեղքերը և դրանով իսկ՝ բուժի վերքերը:

Ինչպէս տեսնում ենք, բանաստեղծն աստիճանաբար խորացնում ու որոշակիացնում է վիրավորվածության հարցը, ուստի հաջորդ՝ 15-րդ գլխում, շարունակելով «ի նոյն ոճ բանի» գրույցն Աստծու հետ, նախ ազդարարում է, որ ասելիքը վերաբերում է անձամբ իրեն՝ «**Իսկ կրկին առակն, որ առ իս**», ապա Քրիստոսից խնդրում ավազակներից սրախողխող եղածի ու հոտից բաժանված և սարերում մոլոր թափառող ոչխարի նման փրկել նաև իրեն, թէև նրանցից ավելի չար ու վատթար է: Ըստ այդմ՝ արտահայտելով ինքնաբնութագրական շատ հետաքրքիր մտքեր՝ խնդրում է դառնալ նաև դեպի իրեն, այսինքն՝ ուշադրություն դարձնել՝

Առ համաճարակ ամենաբոլոր ախտացեալ հոգիս վիրաւոր,

Առ հաւասարեալս անզգայութեանց անասնոց,
Առ աւտարացեալս յընտանութենէ իմաստնոց,
Առ աննմանս հանգունակից բանաւորութեանց:

Թեև բերված տողերից ամեն մեկն ինքնին վերցրած շատ կարևոր է, բայց առանձնակի ուշադրության է արժանի առաջին տողը, որտեղ բանաստեղծը, ընդգծելու համար իր մեղավորությունը, չափից ավելի խտացրել է գույները՝ ասելով «համաճարակ ամենաբոլոր ախտացեալ հոգիս», այդուհանդերձ վերջում հավելված **վիրաւոր** բառով ըստ էության չեղարկվում է նախորդ բառերի գործած ազդեցությունը, և մնում է վերջինիս թողած տպավորությունը, որից ինքնըստինքյան հարց է ծագում. իսկ ի՞նչն է պատճառը, ինչո՞ւ է ամենախիստ ձևով ինքնապարսավող հեղինակն այնուամենայնիվ իրեն համարում հոգեպէս վիրավոր ու վիրավորված: Բնականաբար ծագում է նաև հաջորդ, այսպէս կոչված, պատճառի հարցը. ո՞վ կամ ովքե՞ր և ինչպէ՞ս են վիրավորել բանաստեղծին: Այս հարցի պատասխանը գտնում ենք անմիջապէս հաջորդ՝ 16-րդ գլխում, որտեղ, փառաբանելով Աստվածորդու ամենագորությունը, ամենակարողությունն ու ամենաբարությունը՝ ասում է, որ ինչպէս իջար դռնփակ տարտարոս և ազատեցիր այնտեղ բան-

տարկվածներին, այնպես էլ՝

Դա՛րձ առ իս, որ զնդամ զնդանաւ վիիս

Տղմասիկ գբոյս յերկաթս մեղաց՝

Վիրաւորեալ խոցմամբ սլաքաց քանսարկուին նետից:

Ինչպէս դժվար չէ համոզվել, բանաստեղծն առաջին երկու տողում նկարագրում է տղմասիկ գբում մեղքի շղթայով կապված իր տագնապալից վիճակը, բայց այդ ամբողջ տպավորությունն ի չիք է դառնում, երբ կարդում ենք 3-րդ տողը, որից իմանում ենք բանաստեղծի ահավոր տառապանքի պատճառը. նա վիրավորվել է ոչ թե սովորական ձևով՝ թշնամու հետ դեմ հանդիման մարտնչելով, այլ բանսարկուի դավադրաբար արձակած նետի սլաքից, որին զոհ դարձած բանաստեղծը, բնականաբար, ահավոր ձևով տառապում է՝ առերևույթ մեղադրելով ու դատապարտելով իրեն, բայց աննկատելիորեն, գրեթե լռելյայն ներկայացնում է անձնական դրամայի բազմաթիվ մուրթ էջեր, որոնք լույս են սփռում Մատյանի ամբողջ բովանդակության վրա: Օրինակ՝ այն, որ 6-րդ գլխում, ինչպէս տեսանք, Մատյանը գրելու հիմնական նպատակը համարում է իր հոգում կուտակված թույնն ու թարախը խոսքի խարանով դուրս թափելը, ինքնին վկայում է, որ դրանք կուտակվել էին բանսարկուի կամ բանսարկուների արձակած թունավոր նետերի խոցվածքից: Այնքան ահավոր են եղել վերջիններիս գործած ազդեցությունն ու բանաստեղծի կրած զրկանք-տառապանքները, որ հաջորդ՝ 17-րդ գլխում, Աստծուն համարելով վտանգվածների ու տխրաթախիժ տառապող հոգիների խնամակալ, իր համար ընդամենը խնդրում է.

Մի՛ յաւելուր **հեծութեանս ցաւ,**

Մի՛ **խոցեր զվիրաւորեալս,**

Մի՛ դատապարտեր **զպատժեալս,**

Մի՛ տանջեր **զչարչարեալս,**

Մի՛ գաներ **զհարուածեալս,**

Մի՛ գլորեր **զանկեալս,**

Մի՛ կործաներ **զգայթակղեալս,**

Մի՛ մերժեր **զհեռացեալս,**

Մի՛ տարագրեր **զհալածեալս,**

Մի՛ ամաչեցուցաներ **զպատկառեալս,**

Մի՛ կշտամբեր **զհարթուցեալս,**

Մի՛ խորտակեր **զբեկեալս,**

և այլն:

Այսպէս շարունակելով ևս 18 տող՝ բանաստղեծը հավելում է իր անտանելի ծանր վիճակը բնութագրող նորանոր նույնօրինակ բառեր, որոնք, չլինելով հոմանիշներ, թողնում են հոմանիշության տպավորություն, քանզի ամեն մեկը յուրովի ցույց է տալիս գրեթե համանման վիճակ: Քանի որ, ինչպէս տեսնում ենք, **վիրավորելոյս** բառն այստեղ

գործածված է ոչ թե հենց այնպես, այլ նկարագրելու համար իրականում բանաստեղծի ունեցած հոգեկան ապրումներն ու զգացումները, ուստի, կարծում եմ, միանգամայն իրավունք ունեւ ասելու, որ նույն նպատակով են գործածված նաև զպատժեալս, զչարչարեալս, զհարուածեալս, զանկեալս, զգայթակդեալս, զհեռացեալս, զհալածեալս, զպատկառեալս, զհարթուցեալս, զբեկեալս՝ վերը մեջբերված հատվածում ընդգծված բառերը:

Ասես այս ամենը քիչ է, և ընթերցողը չի կարող ճիշտ հասկանալ, 29-րդ գլխի Ա ենթագլխում, Աստվածորդուն հիշեցնելով նրա այն միտքը, որ թողության օրը լինելու է «փրկարան» և ոչ թե «կորստեան դատապարտարան», ուստի ինքն ակնկալում է՝ «Մպեղանեաց դեղ՝ **վիրաւորեցելոյս**», «Աւրհնութիւն բարեաց՝ **մերժելոյս**», «Կանգնումն վերստին՝ **կործանեցելոյս**», «Պատսպարան հզար՝ **զլորոցելոյս**», «Թագաւոր ներող՝ **պարտելոյս**», «Ձեռնկալ կենաց՝ **հերքելոյս**» և այլն: Գրեթե նույնն ենք տեսնում նաև 30-րդ գլխում, որտեղ, թվարկելով Աստուծոց իր սպասելիքները, ի թիվս այլոց, նշում է. «Առ **կորուսելոյս** յայտնութիւն՝ ճառագայթ քո», «Առ **կործանելոյս** այցելութիւն՝ աջ քո», «Առ բժշկութիւն **անողջանալի խոցուածոյս**՝ մատն քո», «Առ **անիծելոյս կրկին ստացումն**՝ արհնութիւնք քո», «Առ **հոգւով վիրաւորելոյս**՝ կաթուած արեան քո», «Առ **պատուաստումն կտրեցելոյս**՝ կցորդութիւն քո», «Առ **մոլորելոյս դարձաւորութիւն**,* ձայն քո»:

Փաստորեն բանաստեղծը Մատյանի տարբեր գլուխներում տարբեր ձևերով արտահայտում է նույն գաղափարը, այսինքն՝ որ զոհ է դարձել բանսարկությունների ու խարդավանքների, ստացել ծանր հարված, պատժվել ու զրկվել նախկին կարգավիճակից, որը այնքան վիշտ ու ցավ է պատճառել նրան, որ ոչ մի կերպ չի կարողանում մոռանալ, ուստի թեև Մատյանի 83-րդ գլխում որպէս ճշմարիտ հավատացյալ ու աստվածասեր մտածող, աներևակայելիորեն վեր բարձրանալով երկրային մտածողությունից, Աստուծոց խնդրում է ոչ միայն ներել իր թշնամիներին և իր պատճառով չբարկանալ նրանց վրա՝

Իբրեւ զսուրբս **բամբաստողաց**,

Առ յաճախ սիրոյդ, որ ի յիս,

Այլ որպէս զչարս **կշտամբողաց** եւ իրաւամբ նախատողաց՝

Ներեա՛ յանցանաց նոցա,

* Ի դեպ **տաղտկացուցանողական, մատնամուխ, համաճարակ** և **դարձաւորութիւն** բառերը Հայկազյան լեզվի նոր բառգրքում վկայված են միայն հիշյալ օրինակներով, իսկ **ամենաբոլորը** նաև ճառընտիրով, որն ստեղծել է Նարեկացու գրական ժառանգությանը լավածանոթ Գրիգոր Վկայասերը: Ուստի կարող ենք եզրակացնել, որ ինչպէս այդ, այնպէս էլ բազում այլ նորաբանություններ բանաստեղծն ստեղծել է անձամբ իր արտասովոր հոգեկան ծանր վիճակը, հույզերն ու ապրումները հնարավորինս համարժեք ներկայացնելու համար: Վստահ ենք այդ կարգի նորաբանությունների մեկտեղումն ու քննությունը կարող են նպաստել բանաստեղծի կյանքի ու գործունեության նորովի լուսաբանմանը:

այլն մեծահոգաբար առաջարկում է.

Մի՛ սատակեցես **զիմսն խածանողս**, այլ փոփոխեցե՛ս,

Խլեալ զխոտան բարս երկրաւորս՝

Զբարի՛ սն արմատացուցես եւ յիս եւ ի նոսին...,

բայց 90-րդ գլխի Դ ենթագլխում, շարադրելով երկրային, մարդկային, հասարակական կյանքի համար իր ցանկությունները, իդձերն ու երազանքները, թվարկում է մի երկար ցանկ, այդ թվում նաև

Կտրեցի՛ լար խաբէութեան ի մահ որսողին,

Պարսեցի՛ն պատրողին **բանսարկութիւնք**,

Պակասեցի՛ն զէնք **զրպարտողին**,

իսկ ամենակարևորը, ի հակադրություն իր թշնամիներին ներելու խնդրանքի, միանշանակ շեշտում է. «Ի գուրն ինձ փորեալ ինքեա՛նք ընկճեցին», «Խլեցի՛ն յարմատոց անտի **ատամունք խածանողին**»: Ինչպես տեսնում ենք, եթե 83-րդ գլխում իրեն բամբասողների համար խնդրում էր չսատակեցնել «զիմսն խածանողս», այլ մաքրել նրանց խոտան բարքերը և բարին արմատացնել թե՛ իր և թե՛ նրանց մեջ, ապա այստեղ, նորից հիշելով այդ նույն բամբասող թշնամիների խածվածքի պատճառած ցավն ու կսկիծը ասես երկնքից նորից իջնում է երկրի վրա և ցանկանում, որ այդ նույն խածանողների ատամներն արմատից հանվեն: Ոչ պակաս ուշագրավ է և այն հանգամանքը, որ վկայակոչելով Մաղմսերգուի «նա փոս փորեց, խորացրեց, հէնց ինքն էլ ընկաւ այն փոսը, որ նա պատրաստեց» (Մաղ. է., 16) բարոյախրատական անորոշ ու ընդհանրական ճշմարտություն արտահայտող միտքը՝ բանաստեղծն այն միանգամայն որոշակիացրել է իրեն բամբասած, խածած ու վիրավորած թշնամիների համար, որոնք ոչ թե մեկ կամ երկու հոգի էին, այլ բազում:

Հարկավ, ցանկության դեպքում կարող ենք շարունակել Մատյանից այս կարգի մտքերի քննությունը, բայց, կարծում եմ, այսքանն էլ բավական է համոզվելու համար, որ նրանում մեղքի ու մեղավորության հիմնախնդրի հետ թեև ոչ նույն ուժգնությամբ ու հաճախությամբ, բայց ոչ պակաս հուզականությամբ ու տպավորչությամբ քննարկվում է նաև բանաստեղծի վիրավորվածության հարցը, առանց որի ճիշտ ընկալման ու հասկացման հազիվ թե կարող ենք խոսել Մատյանի խորքային հասկացման ու վերլուծության մասին: Անշուշտ, վերջինս իրականացնելու համար շատ կարևոր է պարզել նաև, թե որոշակիորեն ինչ բամբասանքներ են եղել բանաստեղծի մասին, և ինչո՞ւմ են մեղադրել նրան, բայց դա արդեն այլ քննության խնդիր է, որը թողնում ենք մեկ այլ առիթի:

Բանալի բառեր – *հասկացում, ինքնակենսագրական տեղեկություն, վերք, վիրավոր, վիրավորված, բանսարկություն, բանսարկու, թարախ, շարավ, խածանող*

ГРАЧИК МИРЗОЯН – Почему или из-за чего был оскорблён Нарекаци? –

Всматриваясь в «Книге скорбных песнопений» в употребление слов с корнем վր (վիր-) – *рана*, относящихся к личности поэта, автор приходит к выводу, что ещё до написания «Книги» поэт стал жертвой интриг и клеветы, подвергся несправедливым карам и лишениям. Естественно, они причинили ему глубокую боль и горечь. Вот почему при многократном подчёркнутом акценте на проблеме греха и греховности в «Книге» с начала и до конца звучит также мотив перенесённой поэтом душевной боли и обиды, без верного восприятия и анализа которого едва ли возможно правильно понять и оценить этот шедевр.

Ключевые слова: *понимание, автобиографические сведения, рана, уязвлённый, оскорблённый, интриги, клеветник, гной, кусака*

HRACHIK MIRZOYAN –Why Was Narekatsi Insulted or What Was the Reason of That? – Discussing the use of words with the root վր- (վիր-) (wound) in regard to the poet's personality in Narekatsi's "Book of Lamentations", the author comes to the conclusion that before writing the book, the poet had become a victim of intrigues and slander, was subjected to unjust punishments and deprivation. Naturally, all these caused him deep pain and bitterness. That is the reason why together with the issues of sin and sinfulness, the motif of pain and resentment also sound throughout the "Book" without the correct perception and analysis of which it is hardly possible to correctly understand and appreciate the masterpiece.

Key words: *comprehension, autobiographical information, wound, wounded, offended, intriguer, intrigue, pus, sanies, insulter*